ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2- 7

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան (Չարենցավան քաղաք, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս և Ֆանտան բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով.

1.Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան (Չարենցավան քաղաք, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս և Ֆանտան բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-7 համակցված տարածական պլանավորման նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին:

2.Հիմք ընդունելով սույն եզրակացությունը Չարենցավան (Չարենցավան քաղաք, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս և Ֆանտան բնակավայրերը) համայնքի ղեկավարին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ավագանիների հաստատմանը, որից հետո հաստատել ՀՀ Կոտայքի մարզպետի համապատասխան որոշմամբ:

3. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4. ՀՀ Կոտայքի մարզպետին և Չարենցավան (Չարենցավան քաղաք, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս և Ֆանտան բնակավայրերը) համայնքի ղեկավարին՝ ապահովել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ և 23-րդ կետերի պահանջների կատարումը:

Հանձնաժողովի նախագահ՝	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Հ.Դավթյան

Երևան, «8» «հուլիսի» 2024թ.